

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐՅԱՅԻ» ԷԶԵՐՈՒՄ

Ս. Վ. ԳՅՈՒՐՈՒԴԱՂՅԱՆ

Հայերենի գրությունը դարավոր պատմություն ունի և զանազան առաջարկությունների ու գիտավեճերի առիթ է տվել:

Երանելի Մեսրոպ Մաշտոցը մեր գրերն ստեղծեց հնչական սկզբունքով՝ յուրաքանչյուր գիր մի հնչույթի համար, յուրաքանչյուր հնչույթին մի գիր սկզբունքով, ուստի ուղղագրությունն այն ժամանակ համապատասխանում էր ուղղախոսությանը. բոլոր դեպքերում ց-ն գրվում էր գ, ձ-ն՝ դ, փ-ն՝ բ, ք-ն՝ պ, կ-ն՝ կ, լ-ն՝ տ և այլն: Թեև հնչական ուղղագրությունն ամենահեշտն ու լավագույնն է, սակայն այդ սկզբունքը երկար չի տևում: Արտասանությունը հնչյունային օրենքով փոփոխվում է, իսկ գրությունը պահպանվում է, գործում է ավանդականը:

Դեռ X դ. առաջ բաղաձայնանախորդ առաջնականությունը, որ երկբարբառ էր և արտասանվում էր աջ, փոխվել էր օ-ի: Ձեռագրերում այս-ին դուգահեռ հանդիպում է ու տառը (Պաղիս-Պոլիս, Պաղոս-Պողոս, ծնա-ղ-ծնող և այլն), իսկ XI դ. արդեն այբուբենն են մտնում օ և ֆ տառերը: Մինչև ունյն V հնչույթը արտահայտվում է վ (վարդ, ծով, անվերջ), ու (աստուած, տունալ) և լ (թեւ, թիւ, նաւ) տառերով, շփոթվում են է և ե տառերը: Եթե սրանց ավելացնենք տառադարձության (հարմարագրության) ոչ միասնական կանոնները, պարզ կդառնա մեր ուղղագրության վիճակը XIX—XX դդ.: «Հանդես ամսօրյան» սկսեց հրատարակվել մի շրջանում, երբ գիտավեճեր էին ծայր առել ե-է, ո-օ, վ-ւ-ու լծորդ տառերի գրության և օտար անունների տառադարձության; յուրջը: Աշխարհաբարով գրող այն հեղինակները, որոնք հակված էին դեպի դասական, ավանդական գրությունը, գրում էին ժամանակի գրաբարի ուղղագրությամբ, իսկ ովքեր հետևում էին հնչական սկզբունքին, գրում էին ըստ արտասանության: Նույնիսկ յուրաքանչյուր լրագիր ու ամսագիր, յուրաքանչյուր հեղինակ ուղղագրության իր սկզբունքն ունեւր: Վենետիկի միաբան Հ. Ղուկաս վ. Ինճիճյանի խմբագրած «Ծղանակ Բիզանդիանը» (1813—1819 թթ.) տպագրվում էր հնչական ուղղագրությամբ: Վ հնչյունը՝ վ տառով (վար, ծով, աստված, գրված, նվէր, թիվ, նավ և այլն), հոգնակներտ մասնիկը գրում էր է-ով (աշխարհներուն), օժանդակ բայը կպած (ըսերեն), գրում է գաղտնավանկ ը-ն (սըրտանց) և այլն: Գր. Օտյանն իր «Առաջարկութիւն աշխարհաբար լեզուի վրայ» գրքում (1851 թ.) պաշտպանում է վեճագրությունը, չի գրում բառավերջի համար յ-ն (քահանա, տղա): Նահապետ Ռուսինյանն իր «Ուղղախոսութիւն արդի հայ լեզուին» գրքում (1853 թ.) առաջարկում է՝ 1. բոլոր դիրքերում օ հնչույթը գրել օ տառով (քօզ, օրօր, բօլօր, կարօղ), 2. իւ-ն՝ լ տառով (ւղ, գւղ, անկւն), 3. վ-ն գրել վ տառով (նվազ, ավասիկ, կը տարածվի, գվարթ, թիվ, թեվ և այլն), 4. է-ով գրել հոգնակներտ մասնիկը (գրթէր), բայի եւ վերջավորությունը, եւ բայի ձևերը, բայի նախահավելվածը (նավէր, պատմէլ, էմ, էս, էած, էցոյց և այլն), 5. չգրել բառավերջի համար յ-ն (քահանա, սատանա), 6. սըղ-

1 Առաջին օ-ն հանդիպում է 1046 թ. [«Մեծաւ փափազանօք...» (Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետեւ՝ Մատենադարան), ձեռագիր 203)]: Առաջին ֆ-ն՝ 1037 թ. Արտաւազիդի դեղագրում [«Գնաց ի Մուֆարգիւն ի ն22 (1037) թուականին» (տե՛ս Ս. Գյուլբենկերտի «Հայերենի ուղղագրության պատմություն», Երևան, 1973, էջ 83, 114—115)]:

ված ձայնավորի տեղ գրել ապաթարց (մ' երթար, կ' ասեմ, չ' ասեմ), բաղաձայնին նախորդելիս գրել Բ-ով (կը գրեմ, չը վազեմ)։

Ղ. Աղայանն իր «Մի թեթեւ հրահանգ մեր լեզուի ուղղագրութեան մասին» հոդվածում² առաջարկում է վ հնչյունը միայն բառակազմում և ու տառից հետո գրել վ, մնացած բոլոր դեպքերում՝ լ, (վար, նաւավար, ծով, գաւ, թիւ, թեւ, նւէր, աստուած, գրւած և այլն։ Ստ. Մալխասյանցը հակառակն է առաջարկում. բոլոր դեպքերում վ հնչյունն արտահայտել վ տառով, լ-ն թողնել միայն իւ, ու կապակցութիւններում (նավ, աստված, գրված, թիվ, թեւ, նվէր և այլն)³։

Ուղղագրության այս խառը վիճակում, իրարամերժ առաջարկութիւնների պայմաններում միանգամայն ճիշտ սկզբունքով էր առաջնորդվում «Հանդես ամսօրյան» ամուր պահելով ավանդական ուղղագրութիւնը և դուլգնիւն շեղվելով նրանից։ Հենց իր առաջին տարվանից «Հանդեսը» բողոքեց ինքնահնար ուղղագրության դեմ⁴։

Հայերենի կնճռոտ հարցերից է արեւմտահայ և արեւելահայ արտասանութեան ու տառադարձութեան հարցը։ Բոլորի համար էլ, այդ թվում և Մխիթարյանների, ցանկալի է ու անհրաժեշտ մեր երկու հատվածներում ստեղծել միասնական արտասանութիւն ու դրութիւն։ Սակայն իրականում դա անհնարին էր։ Առաջին անգամ այդ հարցը բարձրացրել է «Մասիսը»։ Այստեղ հոդվածագիրն առաջարկում է արեւելահայերենում ում, եւ վերջավորութիւնները փոխարինել կը մասնիկով և ստեղծել մի միասնական լեզու⁵։ Սրան պատասխանում է Ղ. Աղայանը՝ 1874 թ. գրելով «Հայկական հնչյունների մասին (լուծումն տարակուսանաց)» գրքուկը, որտեղ հակառակն է ասում, թե լավ կլինի արեւմտահայերն իրենց սաներին սովորեցնեն, որ ք-ն ք արտասանեն, դ-ն՝ դ, գ-ն՝ գ, պ-ն՝ պ, տ-ն՝ տ, կ-ն՝ կ և այլն։ «Աստվածաշնչում» Պետրոս, Պողոս, Պոնտոս, Պաղեստին բառերը պ-ով են գրված, հիմա էլ թող նապոլեոն ասեն ու պ-ով գրեն։ Աղայանը, իհարկե, սխալվում է, երբ ժայրաձեղութեան հասնելով՝ գրում է, թե պոլսեցիք հայ վարժապետներ չեն ունեցել, նրանց դպրոցներում դասավանդել են լատին կամ լատինացած և կամ աղճատ հայախոս անգլիացի «միսիոնարներ», որոնք ձգտել են հայերենը կրոնափոխութեան միջոց դարձնել։

Այս հարցի շուրջն սկսվում է մի երկարատե գիտավեճ։ «Արձագանքում» (1865), «Մշակում» (1886) լույս են տեսնում հոդվածներ, որոնց հեղինակները կրկնում են Աղայանի կարծիքը, թե թուրքերենի ազդեցութեան տակ պոլսեցիք Պետերմտն արտասանում են Բեդերման, Պլատոնը՝ Բլադոն, Գարիբալդին՝ Կարիպալտի, Բերլինը՝ Պերլին, գրում են Բեզգալոճի, Տիսդէրվէկ և այլն։ Նրանց կարծիքով այդ արտասանութեան պատճառներից մեկն էլ Մխիթարյան հայրերն են, որոնք կտրված էին բուն ժողովրդից, ժողովրդական արտասանութիւնից։ Այս սխալ եզրակացութիւնից բխում է նրանց մյուս սխալը, թե կարելի է Պոլսի ու Վանի դպրոցների միջոցով (եռաստիճան համակարգը սովորեցնելով) արեւմտահայերենում վերականգնել խուլերի շարքը, որ արտասանեն պ, տ, կ, ծ, ճ։ Հնչյունական այս երևույթի թշուր ըմբռնումը, նրա առաջացման պատմական ընթացքին անտեղյակ լինելը հեղինակներին հանգեցրել է այդ սխալ եզրակացութեանը։

Լույս է տեսնում Ա. Տիրոյանի հոդվածը՝ «Բացահայտութիւն մի հայկական տառերու հնչման եւ գրութեան մասին առ մեծ. խմբագիրն «Մշակ» լրագրի»⁶ խորագրով։ Հոդվածագիրն իրավացիորեն նշում է, թե արեւմտա-

² «Աղբյուր», 1888, № 12, էջ 99—103.

³ Ստ. Մալխասյանց, Մի հնչյունին մի գիր, Թիֆլիս, 1910.

⁴ «Հանդես ամսօրյա», 1887, № 9, էջ 134 (այսուհետեւ «Հանդեսի» թիվը, համարը և էջը բնագրին կից)։

⁵ «Մասիս», 1874, № 1546.

⁶ «Բաղմավեպ», 1886, գ. պրակ, էջ 192.

Հայերենը նույնպես մշակվում ու զարգանում է ժողովրդական կենդանի լեզվի միջոցով, նա հենվում է Բարձր Հայքի, Աղձնյաց, Տայոց, Վասպուրականի բնակիչների կենդանի լեզվի վրա, որը կենտրոնական Հայաստանի լեզուն է։ Ուլքեր կարծում են, թե Մխիթարյաններն են աղավաղել լեզուն, սխալվում են. մի խումբ հայագետներ ինչպե՞ս կարող էին այդքան լայն տարածքով ազդեցություն ունենալ։ Ընդունելով, որ «ռուսահայոց հնչումն ընտրելագույն է, քան զտաճկահայոցը»՝ ընդգծում է, թե դա երբեք էլ չի նշանակում, որ առճակատ հնչումն օտար է և խոտելի⁷։

Այս հարցերում Տիրոյանը ճիշտ է, բայց սխալվում է, երբ փորձում է մեկնաբանել, թե երբ է առաջացել արտասանական տարբերությունը։ Նրա կարծիքով դեռ Մաշտոցի ժամանակ գոյություն ունեին արևելահայ և արևմտահայ բաժանումը, ըստ որում արևմտահայերը մեծ խումբ էին կազմում, արևելահայերը՝ փոքր։ Մաշտոցը գրերն ստեղծեց ըստ արևելահայ արտասանության, որովհետև դա ուսանիկ լեզվի արտասանությունն էր։ Հենց թարգմանչաց ժամանակ արևմտահայերը կային և Պետրոսը Բեդրոս էին արտասանում։ Թեև ապացուցված է, որ մեր ա-ն Վ դարում ա է արտասանվել, ալ-ն՝ ալ, դ-ն՝ դ, գ-ն՝ գ և այլն, սակայն Տիրոյանը, հետևելով Գարագաշյանին, կասկածի տակ է առնում այդ։

Կ. Ություճյանը իր «Առաջարկությունը» հոդվածում գրում է, թե սխալ է պ, տ, կ, ծ, ճ տառերը կարդալ արևելահայերի նման, վերականգնել աւ-ը օ-ի փոխարեն, գ-ի փոխարեն գրել փշիկով և (ի)⁸։ Հոդվածագրի առաջարկով կազմվում է այդ հարցը քննող հանձնաժողով (Խրիմյան Հայրիկ, Գ. Մովսիսյան, Վ. Տերվիշյան, Դ. Քալանթարյան և ուրիշներ)։ Հանձնաժողովը երբեք նիստ է գումարում։ Եզրակացությունն այն է լինում, որ «Արևելյան հայոց (Արարատեան) հնչումը սրբոց թարգմանչաց հնչման ճիշտ նման լինելու ամենամեծ հաճանականությունն ունի»⁹, ուստի պիտի փոխել արևմտահայ արտասանությունը, որպեսզի ստացվի մի միասնական արտասանություն ու գրություն։ Որոշումն ընդունելուց առաջ այն ուղարկում են խոշոր հայագետներին՝ կարծիքի, որով և հարցը փակվում է անարդյունք։ Ություճյանի դեմ հոդվածներ են տպագրվում։ Առանձնապես հետաքրքիր է Հռոմի Հայկազյան վարժարանի հայոց լեզվի ուսուցիչ Հովհ. Մխչյանի հոդվածը, ըստ որի ոչ թե արևմտահայերը, այլ արևելահայերն են շեղվել մեսրոպյան հնչումից։

Այս հարցին սպառնիչ պատասխան տվեցին Գ. Մենեվիշյանը, Ա. Այտընյանը և Հյուբեյանը։ Մենեվիշյանն իր հոդվածում՝ «Արևմտեան բարբառին նկատմամբ եղած «Առաջարկությունն» մասին»¹⁰, ինչպես առհասարակ, այս դեպքում էլ հանդես է բերում գիտնականին հատուկ գործիմացություն և լեզվաբանական վերլուծություն։ Հոդվածում նա գալիս է հետևյալ եզրակացության։

1. Արևմտահայ արտասանությունը լեզվական (հնչունական) փոփոխության արդյունք է, մարդկանց գիտակցական մոտեցման, միջնորդության հետևանք է, այն ստեղծվել է դարերի ընթացքում և մի ամբողջ համակարգ է և ոչ թե սխալ։ Դեռ Վ դ. առաջ է կատարվել առաջին հնչունափոխությունը. սանսկրիտ baadh>հայերեն բանտ, լատին domus, սանսկրիտ dhaman>հայ. տուն, dason>հայ. տասը և այլն։ Արևմտահայ արտասանության վրա ավելի շատ եվրոպական լեզուներն են ազդել, քան թուրքերենը։ 2. Տարարտասանությունը չի խանգարում ազգի միությունը, բավական է, որ գրավորը միասնական լինի։ 3. Պատշաճագույն է հետևել նախնյաց (ուստի և արևելահայ) տառադարձությանը։ Մխիթարյանները փորձեցին գրել ըստ Մաշտոցի հնչման, բայց նրանց չհետևեցին, և նրանք էլ չշարունակեցին։

⁷ Նույն տեղում, էջ 199։

⁸ «Արևելք», 3. III. 1888։

⁹ Ս. Վ. Գյուլբուրգյան, նշվ. աշխ., էջ 286։

¹⁰ «Արևելք», 11. IV. 1888։

Իր այս մտքերը Մենելիշյանն արտահայտում է նաև «Գրական և լեզուական դիտողություններ» հոդվածում (1930, 10, 11):

Երկու գրավոր աշխարհարար ունենք, ասում է նա, արևելյան ու արևմտյան, նրանց ծագումը այլևայլ ժամանակներում, այլևայլ տեղերում է տեղի ունեցել, այլևայլ ազդեցությունների տակ: Հին «Մասիսը», «Բազմավեր», «Ծվրոպան» տարբեր լեզուներից են ազդվել՝ ֆրանսերենից, թուրքերենից, իտալերենից, գերմաներենից, ռուսերենից: Ինչպես տեսնում ենք, լեզվաբանը չի անտեսում ազդեցությունները: Հնչյունային օրենքի հետ գործում են նաև հարևան լեզուների ազդեցությունները:

«Հանդես ամսօրյայում» հրապարակվում է Հյուբշմանի կարծիքը, ըստ որի արևմտահայ արտասանությունը սխալ համարելը գիտական չէ: «Եթե տիղիսեցիք հին արտասանությունը պահած են, այս իրենց ոչինչ զոլովթին է, ինչպես նաև արևմտեան հայոց՝ նախնական արտասանությունն էին հեռացած ըլլալը պարսաւանք չէ» (1888, № 7, էջ 122): Բոլոր կենդանի լեզուներն էլ դարերի ընթացքում փոփոխվում են, միայն մեռած լեզուներն են անփոփոխ: Լեզվական փոփոխությունը կատարվում է խոսողի կամքից անկախ, անգիտակցաբար: Ո՛չ մարդկային կամքն է այդ փոփոխությունն առաջ բերում, ո՛չ էլ այդ կամքը կարող է վերականգնել նախորդ վիճակը, ուստի անկարելի է, որ արևմտահայերը հին արտասանությանը դառնան: Տիղիսցիների պահանջն անիրագործելի է, ուստի և՛ անարժեք: Այս հարցի վերջնական ու մանրամասն քննությունը կատարեց Ա. Այտընյանը, թեև Հյուբշմանի կարծիքն էլ հարցի ճիշտ լուծում էր (1888—1889): Ութսունական թվականներին արևելահայերենի առաջնության պաշտպանները սկսեցին տրտնջալ, թե ինչու են արևմտահայերը աղավաղում մաշտոցյան գրությունը և հպարտանալ, որ գրության ավանդականությունն իրենց անկողոպտելի պարծանքն է: Միակողմանիությունը հասավ ծայրահեղության: Գիտական չէր և անարդար էր մշակականների կարծիքը, թե արևմտահայերը չեն ունեցել հայ վարժապետներ, որ սովորեցնեին նախնայաց արտասանությունը, և մայրենին սովորել են օտարներից: Անհեթեթ է կարծել, թե արևմտահայ արտասանությունը նոր է, հատուկ Կ. Պոլսին, որ թուրքերենի ազդեցությամբ է ստեղծվել, Մխիթարյանների գլուխն է և այլն: Ժիշտ է, Թրակացու թարգմանիչը հայերենի բաղաձայնական համակարգը ներկայացրել է երեք շարքով, հունարենին նման՝ պ, տ, կ (π, τ, χ), բ, գ, դ (β, γ, δ) և փ, թ, ֆ (φ, ν, χ), որ նշանակում է, թե V դարում մենք ունեինք եռաշարք բաղաձայնական համակարգ՝ նուրբ, միջակ և սովար: Բայց այդ համակարգը նույնությամբ չի պահպանվել, պատմության ընթացքում փոխվել է: «Մեծն Տարօնացւոյ աւանդած հնչմունքն այսօրուան Տարօնացւոյն հնչմանցն համեմատ չեն եւ ոչ էլ նախնւոյն Կողբացւոյ գրածն այժմու Կողբացւոցն կարդացածին» (1889, № 1, էջ 8, 49): Եվ, իսկապես, այսօր ձայնեղները (միջակ) ձայնավորներին և ձայնորդներին հաջորդելիս փոխվում են շնչեղ խուլ (սովար կամ թավ) հնչյունի, վաւդ, սուրբ, փաւծ և այլն բառերն արտասանվում են վաւթ, սուրփ, փաւց: Բառասկզբում յ-ն մեծ մասամբ հնչում է հ, ե-ն՝ յէ, ու-ն՝ վօ, բառավերջի յ-ն չի արտասանվում և այլն: Մեծ հայագետ Այտընյանը իրավացի է, երբ գրում է, թե մինչև X դարը բաղաձայնների արտասանությունն ու օտար բառերի տառադարձությունը միասնական էր, ընդհանուր: X դ. հետո արևելահայերը պահպանեցին նախնայաց արտասանությունն ու տառադարձությունը, իսկ արևմտահայերը նոր փոխառյալ բառերը հարմարագրեցին ըստ իրենց արտասանության, իսկ հին փոխառյալները պահեցին հին տառադարձությունը: Սա վիեննայի դպրոցի որոշումն էր:

Ա. Այտընյանն իրավացի է, երբ գրում է, թե դեռ XI—XII դդ. մեզ հայտնի է հայերենի նուրբ տառերի (պ, տ, կ) արտասանական փոփոխությունը: Սենք կավելացնենք, որ այդ հնչյունափոխությունն ավելի վաղ է նկատվում: Լազարյան Ավետարանում (887 թ.) հանդիպում են մի կողմից՝ հունծք, կանկնեցավ, ամպոխ (փոխ. հունծք, կանգնեցավ, ամբոխ), մյուս կողմից՝ ծունգ, մանգանց, բանդէ, տնգեաց (փոխ. ծունկ, մանկանց, տնկեաց, բանտէ):

Առաջին դեպքում գործել է հնչյունափոխության տարնմանման օրենքը՝ ն, մ ձայնորդները (նալ) իրենցից հեռացրել են ձայնեղներին, վերածել խուլերի, երկրորդ դեպքում՝ առնմանման օրենքը. նույն ձայնորդները խուլերին իրենց են նմանեցրել՝ փոխելով ձայնեղի (ն>ծ, գ>կ, ք>պ, կ>գ, տ>դ): Այս երևույթը նկատելի է X դարից էլ առաջ գրված ձեռագրերում ու վիմական արձանագրություններում¹¹, Ագաթանգեղոսի պատմության կրկնագրում: Նշանակում է արևմտահայ արտասանությունը շատ հին է, հետևանք հնչյունական օրենքի: Այստեղ պատճառը ո՛չ թուրքերենն է, ո՛չ Կ. Պոլիսը և ո՛չ էլ Մխիթարյանները: Այստեղյանը զարմանում է, թե ինչպես կարող է Կիլիկիայի բաղաձայնների խաղաղուրդ համակարգը ֆրանսերենի ազդեցությունից առաջանալ, չէ՞ որ ֆրանսերենում խուլ հնչյուններ կան, և հայերեն են նրանց խուլերը ձայնեղ արտասանում: Գիտական և ճիշտ է Ա. Այստեղյանի կարակացությունը՝ լեզվական (հնչյունական) փոփոխությունը կատարվում է մարդկանց կամքից անկախ, լեզվական (հնչյունական) ներքին օրենքով: Լեզվաբանը, իհարկե, չէր կարող ժխտել հարևան լեզուների ազդեցությունը, և Ա. Այստեղյանը նշում է արևմտահայերի որոշ արտասանությունների (ա-բ, օ-ծ-ց) առաջացումը թուրքերենի և այլ լեզուների ազդեցությունից: Բայց դրանք մասնակի են և համակարգ չեն ստեղծում:

Հայտնի բան է, որ տառադարձության ժամանակ պետք է հարազատ մնալ փոխատու լեզվի հնչմանը, սակայն, նշում է Ա. Այստեղյանը, դա դժվարանում է նրանով, որ V դ. արտասանությունն այսօր փոխվել է, եթե հարմարագրենք նրանց հին արտասանությամբ, այսօրվա հույներ կարող է չճանաչել իր բառը: XIX դարի տառադարձությունը մեծ լեզվաբանը ներկայացնում է երեք խմբով.

1. խառնակ հարմարագրություն (Demidov > Դեմիտով — d > Դ. d > տ),
2. անխառն արևմտյան հարմարագրություն (baron > պարոն, Berlin > Պէրլին),
3. ռուսահայ անխառն հարմարագրություն (gimnazia > գիմնազիա, Berlin > Բեռլին):

Այժմ, եզրակացնում է Ա. Այստեղյանը, կանոնավորված է արևմտահայերենի ուղղագրությունը: «Զկա. լեզու մը այնպէս որոշ կանոնաւոր կերպով երկու կարգ բաղաձայններին իրարու անվրէպ փոխանակած, ինչպէս արեւմտեան ըստած հայերէնը դարերէ ի վէր» (ն. տ., էջ 40): Ա. Այստեղյանին նույնպես ցանկալի է հայերենի երկու հատվածներում մի միասնական արտասանություն ու գրություն ստեղծել, բայց առաջինն անհնար է, երկրորդի համար պետք է երկու կողմերն էլ մտածեն:

Ս. Մանգինյանը նկատի ունենալով Ս հնչյունի խառնակ գրությունը՝ հետևում է Ստ. Մալխասյանի առաջարկին և այսուհետև Ս հնչյունը ամենուրեք գրում է վ տառով (նավ, գրված, թիվ, վազք, սեվ, նվէր), ինչպես արեւմտեան ըստած հայերէնը դարերէ ի վէր» (ն. տ., էջ 40): Ա. Այստեղյանին նույնպես ցանկալի է հայերենի երկու հատվածներում մի միասնական արտասանություն ու գրություն ստեղծել, բայց առաջինն անհնար է, երկրորդի համար պետք է երկու կողմերն էլ մտածեն:

Եթե «Արորը» գրում է թագավոր, ինչպէ՞ս կարող է արգելել մեկ ուրիշին գրելու տագնապ: Կարելի է վիճել բայերի խոնարհման, գոյականների հոլովման համակարգում վ կամ ռ գրելու շուրջը (գտնելի-գտնվի-գտնուի, թվի-թի-թուի և այլն), բայց կայուն, անշարժ կառվածք դարձած բառերին չպիտի ձեռք տալ: Վ-ի և ռ-ի գրության մեջ դպրոցականն անգամ չի սխալվում: Գ. Մանգինյանը նույնպես կողմ էր երկու հատվածներում ստեղծել միասնական գրություն, մասնավորապես տառադարձություն, իսկ միասնական արտասանու-

¹¹ Ս. Վ. Գյուլբուդաղյան, նշվ. աշխ., էջ 13—14:

¹² «Արոր», 1910, № 1, էջ 1:

խաբեն դրել և տառը, 2. ամենուրեք օ հնչյունը գրել օ տառով, Թ-ին տալ Թ-ի արժեքը, ՎՕ-ն գրել ՎՕ տառակապակցությամբ, 3. յե հնչյունը գրել ե տառով, Ե-ն՝ է տառով, 4. Ս հնչյունն ամենուրեք գրել Ս, իսկ Վ-ն թողնել իրրե նրա մեծատառ (ւանք, վահան), 5. պահել բառավերջի համը յ-ն, իւ-ն գրել յո տառակապակցությամբ, Մենեվիշյանը քննադատելով ու մերժելով այս առաջարկությունը՝ գրում է, թե ըստ Մարկոսյանի պիտի գրենք.

Մէր հայրէնիք թշառ անտէր	Մէր հայրէնիք շղթանէրօւ
Մէր թշնամոց ւօտնակօխ,	Այսքան տարի կապկապած,
Յոր ւօրդիքը արդ կանչում է	Յոր քաջ ւօրդօց սորբ արյոնօւ
Հանէլ յոր ւրէժ քէն ու օխ:	Պիտի լինի ազատւած (ն. տ., № 8, էջ 229):

Մեր է-ե, յ-ն, Վ-վ լծորդները, ասում է նա, նույն հնչյունները չէին, ուստի և տարբեր գրերով էին արտահայտվում: Մենք պիտի պահենք այդ գրերն անաղարտությամբ: Միանգամայն արդարացի է Գ. Մենեվիշյանը, երբ գրում է, թե այսօր Ատ. Մալխասյանին ու Մարկոսյանին լսենք, վաղն էլ մի ուրիշի պիտի լսենք և ստեղծենք մի շփոթ գրություն: «Հնաւանդութիւնը լեզուի գոյութեան առաւելութիւնն է»: «Ով որ հայերէն լեզուէն մասնիկ մը իսկ կը լուծէ, կը քակէ, կը ջնջէ եւ այնպէս կ'ուսուցանէ զմարդիկ, փոքր պիտի կոչուի»—եզրակացնում է հայագետը (ն. տ. էջ 233):

Հայերենի ուղղագրության վերաբերյալ Մենեվիշյանի հոգվածների ամփոփումն է նրա «Ուղղագրութեան խնդիր կա՞ հայուն համար» հոդվածը (1913, № 12, էջ 729—736): Հեղինակի կարծիքով, եթե խոսքը վերաբերում է բնիկ հայերին (զարմանալիորեն բնիկ հայեր ասելով նա հասկանում է միայն արևմտահայերին, կարծես արևելահայերը բնիկ չեն), ուղղագրության հարց չկա, իսկ արևելահայերի համար կա: Հայագետն այն կարծիքին է, թե արևմտահայը հեշտությամբ տարբերում է միջին, լերկ և թավ (բ, պ, փ), ինչպես և Վ-ւ, օ-ու, է-ե տառերի գրության կանոնները և սխալ թույլ չի տալիս (այստեղ էլ առանձնացնելով արևմտահայերին):

Նկատելի է, որ լեզվաբանը շատ է հեշտացնում մեր ուղղագրությունը, այն էլ արևմտահայերի համար, և այդ այն դեպքում, երբ հենց արևմտահայ շատ մտավորականներ, տեսնելով այդ դժվարությունը, պահանջում էին ուղղագրական փոփոխություններ: Ուղղագրության հեշտ կամ դժվար լինելը, իմ կարծիքով, պետք է որոշել աշակերտի աչքերով, ոչ թե գրագետի: Ուղղագրությունը փոխելու հարց չպիտի լինի ոչ արևմտահայերենում, ոչ էլ արևելահայերենում, երկուսում էլ պիտի պահպանել ավանդականը, սա է ճիշտը: Իսկ եթե խոսքը վերաբերում է հեշտ կամ դժվար լինելուն, ապա հանրահայտ բան է, որ արևմտահայ գրությունն ավելի դժվար է: Արևմտահայերեն սովորողը պիտի տարբերի սեր-սէր, գետ-գէտ, մեզ-մէզ, նուէր-նվեր, հոտ-հօտ զուգերը, պիտի գրի բառավերջի համը յ-ն, պիտի իմանա, թե ո՞ր դեպքում են ծաւլութուն, հայ, մայրիկ և նման բառերը գրվում փոքրատառով, որ դեպքում՝ մեծատառով, պիտի իմանա, թե ո՞ր դեպքում է բառասկզբի և հնչյունը գրվում յ տառով, որ դեպքում՝ ճ տառով և այլն, և այլն: Այսօր արևելահայ սովորողի համար այդպիսի խնդիր չկա: Ուրեմն եթե հեշտության հարց է, այսօրվա խորհրդային Հայաստանի ուղղագրությունն է հեշտը: Միանգամայն այլ խնդիր է, որ ավանդական ուղղագրությունը չպիտի փոխվեր, դա սխալ քայլ էր, որ արվեց խորհրդային Հայաստանում, դա մի կողմից դժվարացրեց մեր անցյալի դարավոր մշակույթի յուրացումը, մյուս կողմից՝ մեծազրեց մի ժողովրդի, մի ազգության միջև եղած ճեղքը՝ դժվարացնելով տարաբաժան հատվածների գրավոր հաղորդակցումը:

Արդյո՞ք կստեղծվի մի միասնական ուղղագրություն մեր երկու հատվածի համար, դժվար է ասել, երևի՜ ոչ: Մենեվիշյանը վերը նշված հոգվածում համամիտ է միասնական արտասանության ու գրության ստեղծելուն, պայմաններ չկան այն իրականացնելու: Ուստի, ասում է նա, ուղղագրական միջնորմը արևելյանի ու արևմտյանի միջև մնալու է: Ռուսահայերն իրենց հայերենը, ոճն ու ուղղագրությունն ունեն, թող ունենան, բայց թույլ տան,

որ մենք էլ պարծենանք, թե մեր ուղղագրութիւնը կապուած է մեր անցեալի, մեր գրաբար հարուստ գրականութեան, մեր ժողովրդի հետ: Քանզի այդ կար, կը նշանակէ գործել պատմական մեծ սխալ» (ն. տ., էջ 730):

Անդրադառնալով տառադարձութեանը՝ մեծ հայագետը գտնում է, որ պիտի պահպանել մաշտոցյան (ուրեմն արեւելահայ) տառադարձութիւնը: Դպրոցում պիտի սովորեցնել այդ տառադարձութիւնը: Հոգւածագիրն իրավացիորեն մեծարում, բարձր գնահատական է տալիս Մխիթարյանների ստեղծած մշակութիւն: «Սահակ ու Մեսրոպ ծնան գրաւոր հայերէնն, Մխիթար մըն ալ մշտնջենավորեց գոնէ արեւմտեան հայերէնն իւր գրականութեամբ, դպրութեամբ... Սիրտս հայ պիտի ըղգայ, միտքս հայ պիտի խորհի, լեզուս հայերէն պիտի խօսի», — եզրակացնում է նա (ն. տ., էջ 729):

Հայերենի ուղղագրութեան պատմութեան համար շահագնաց կարևոր է մեծ հայագետ Հրաչյա Աճառյանի «Քննութիւն կրկնագիր Ագաթանգեղոսի» ուսումնասիրութիւնը (ն. տ. № 1, էջ 12): Հոգւածի սկզբում նա բացատրում է, որ տերունական (հոգևոր) անունները մեր նախնիք գրում էին համառոտագրված և վրան դնում էին ւ նշանը, որ կոչվում էր պատիվ (Աժ, Ք, Յ ս...), որոնք պահպանվում էին նաև ածանցման և հոլովման ժամանակ

(ածային, Քի, զՏր...): Աճառյանը ենթադրում է, թե պատիվը սեմական լեզուներից պիտի անցած լինի մեզ: Կրկնագրում հանդիպում է մեկ անգամ

համառոտագրված մի սովորական բառ՝ պարկեշաութի. որ վկայում է, թե համառոտագրութիւնն IX դ. սկսում է տարածվել նաև ոչ տերունական բառերի վրա: Կրկնագրում գլխագրերի հատուկ ձև չկա, դրանք սովորական տառերն են՝ ավելի մեծացրած: Գլխագրերով գրվել են նոր տողից, վերջապետից հետո և մի քանի հատուկ անուններ: Շատ հատուկ անուններ էլ փոքրատառով են գրված: Հատուկ անունները մեծատառով գրելու կանոն չի եղել: Վերջապետն արտահայտված է մեկ կետով, կա նաև ստորակետ, իսկ ենթամաս (տողագրածի գիծ) չկա:

Մեծ լեզվաբանը շատ ավելի մանրամասն է քննել կրկնագրում եղած տողագրածը: Նա գրում է, թե հայերենում տողագրածի միասնական կանոն չի եղել նույնիսկ XIX—XX դարերում: Ռուսերենին հետևողը չի սիրում մեկ տառը հաջորդ տողը տանել, գերմաներենին հետևողը թույլ չի տալիս բարդ բառերը կտրատել (ոչ թե վրիժառու, այլ՝ վրիժ-առու), եվրոպական լեզուներում և, ռ, ր, ռ տառերը նախորդ բաղաձայններից մեկը կպցնում են իրենց, որոշ լեզվաբաններ ուզում են դա կիրառել նաև հայերենում և գրում են՝ հա-գնիլ, ան-դրի, ա-քլոր, մա-րդկանց և այլն: Ուրիշներն էլ հունարենի օրինակով գրում երկբարբառը տրոհելով առաջ և ետևարան, հայոց, գոյ-ութիւն, որոնք լեզվաբանը համարում է օտարամուտ ձևեր: Հայերենի օրենքը վանկատումն է: Պիտի ասեմ, որ «Հանդէս ամսօրեան» նույնպես երկբարբառը չի տրոհում, գրում է՝ պահլաւ-երէն, կաբեւ-որութեամբ, յո-գվածագիր, մանաւ-անդ, հայ-ոց և այլն: Անդրադառնալով կրկնագրի տողագրածին՝ Աճառյանը գրում է, թե այնտեղ հաշվել է 712 տողագրած, որից 505-ը վանկատումով է (կանոնավոր): Ելնելով այս քանակից և այն բանից, որ 92 դեպքում գրիչը վերջին տառը չի տարել հաջորդ տողը, գրել է նախորդ տառի գլխին (պարտու, ճշմարտութիւն), կամ գրել է հաճախ՝ — ցես, արաբէ, ճանաչալլն, Աճառյանը հակված է կարծելու, թե գրիչը վանկատման օրենքով է տողագրած կատարել: Հայագետը երոկնագրում որոշ օրինաչափութիւն է տեսնում: Այսպես՝ 1. եթե յ-ին հաջորդում է ձայնավոր, մնում է նախորդ տողում, իսկ եթե բաղաձայն՝ անցնում է հաջորդ տող (տղայ-աբար, բայց՝ ամենա-յն), 2. ձայնավորին նախորդող աւ-ը չի բաժանվում (թագաւ-որի), 3. բաղաձայնին նախորդող եա, իւ, յւ, աւ արգարբառները տրոհվում են (մարթացե-ալ, արի-ւն, լո-յս, հարն և այլն):

Մենք այլ ձեռագրերի տվյալներից ելնելով՝ կասկածեցինք, որ IX դարի ոչ բառանշատ ձեռագրում, ինչպիսին Ագաթանգեղոսի կրկնագիրն է, նաև ոչ է տողագրածը կանոնով արված լինել: Նորից ուսումնասիրեցինք կրկնագիր-

րը: Պարզվեց, որ գրչի թույլ տված 207 շեղումներն այնպիսին են, որ հակասում են վանկատմանը: Այսպես՝ 1. Հաջորդ տող է տանում վերջին տառը (նոք-ա, քե-զ, աւ-ր, աղա-ց և այլն), 2. տրոհում է ու ձայնավորի, երկբարբառների բաղադրիչները (բազո-ւմս, արի-ւն, գա-յղն, ժառանգե-աց և այլն), 3. հաճախ նախավերջին տառը գրում է նախորդի գլխին, իսկ վերջինը տանում է հաջորդ տող դրան -ւ, քաջագործութեան -ն), 4. միայն չորս դեպքում է գրել գաղտնավանկ, մնացած դեպքերում չի գրել (սրտին, կոզմա-նս, ան-դնդոց) 5. հաճախ վերջին երկու բաղաձայնն է տանում հաջորդ տող (մա-րդ, պատկե-րք): Ժիշտ է, չորս դեպքում տողադարձի ժամանակ գրել է գաղտնավանկի ը-ն, բայց այդ ը-ն հաճախ հանդիպում է նաև բառամիջում, տողադարձ չարված բառերում (տուրնջեան, զժողովրդին, անդրնդոց), նույնիսկ՝ յնթրիս ձևով: Տողադարձի այս բոլոր ձևերը հանդիպում են V—X դդ. գրեթե բոլոր ձեռագրերում ու վիմագրերում: Լազարյան Ավետարանում նույնպես (887 թ.) խախտված է վանկատման օրենքը: Այնտեղ էլ հանդիպում են՝ հանդե-րձ, հե-ղձուցանեմ, աշխա-րհս, աշակե-րտքն, առա-նձինն, դպի-րքն, կամ ք-աղաք, գ-աւրս, գ-հետ, ծ-ովու, տ-խուր, գ-ի, արմ-ատս, պաշտ-իլ, թո-յղ, ա-յսմ, ա-յր, ի-ւր, ձկո-ւնս, նաև՝ հա -ատքն, շա՜ -հսցի, 3 ո-վհաննէս և այլն: Սրանցից կարելի է անել մի եղբակացություն միայն. V—X դդ. ձեռագրերում, որոնք բառանշատ չէին, տողադարձի կանոն չի եղել, գրիչը բառի ցանկացած մասը տարել կամ թողել է նախորդ տողը, որով տառեր նախորդ տառի գլխին գրելը տեղ շահելու համար է արվել:

Անդրադառնալով ե-է ձայնավորների գրությանը՝ Աճառյանը ցույց է տալիս, որ դրանք շփոթված են, միևնույն բառը հանդիպում է թե՛ ե, թե՛ է տառերով (էի, էիր, եինք, եիք, կազմեին, դատեին, թէպէտ-թեպետ, փոխա-րէն-փոխարեն, կէցցէ-կեցցէ): Ավելացնենք, որ այս երևույթը նկատվում է շատ ավելի վաղ՝ VI—IX դարերում: Օրինակ՝ Հռիփսիմեի վանքի պատին Կոմիտաս կաթողիկոսի արձանագրության մեջ (618 թ.) գրված է. «Ծա Կոմիտաս եկեղեցական սրբոյ Հռիփսիմէի կոչեցալ», բայց նաև «շինաւ սրբոյ Հռիփսիմէի»¹⁴, Կրկնագրում կա ծնտ (փխ. ծնատ) գրությունը: Հանդիպում են մի կողմից՝ տեսաւղացն, ստացաւղացն, մյուս կողմից՝ կարող, դառնացողաց, խոստովանող զուգահեռ գրությունները: Սա ցույց է տալիս, որ IX դարում արդեն աւերակաբար կարդացվում էր օ (աւ>օ), մի երևույթ, որ նկատվում է IX դարից էլ առաջ¹⁵: Հանդիպում է նախնախնա բառը (փոխ. ճախճախուտ), որը վկայում է, որ IX դարում ղ-ն արդեն զատ էր հնչում: Հանդիպում է նաև և յեա զուգահեռ գրությունը:

Ինչպես վերև ասվեց, Հր. Աճառյանի այս ուսումնասիրությունը ուղղագրական շատ հարցեր է պարզաբանում և կարևոր ներդրում է հայերենի ուղղագրության պատմության մեջ:

Այս շրջանում բանավիճային հարց է դառնում բայասկզբի ժխտական չ և եղանակիչ կ մասնիկների գրության հարցը: Վաղ միջնադարում այդ մասնիկները հետո ը կամ որևէ նշան չէին դնում, գրում էին չկայ, կհազայ, կիմանայ և այլն: Այս մասին հիշատակում է նաև Բագրատունին՝ բերելով մի քառատող Շնորհալույց, որտեղ ը-ն չի գրված¹⁶, XVII դ. սկսեցին ը-ն գրել նախ նրա փոխարեն դնում էին $\geq$ նշանը (չ՝ թողու, կ՝ խնայէ), հետո արդեն՝ ը տառը: «Ծղանակ Բիւզանդեանը» (1813 թ.) կ-ն գրում է բաղաձայնից առաջ՝ ը-ով և կպած (կըծնանին), իսկ ձայնավորից առաջ՝ առանց ը-ի և կպած (կերթայ): Ավետիքյանի «Քերականութեան» մեջ (1815 թ.) այս մասնիկները հանդիպում են չորս ձևով՝ 1. ը-ով և միացած (կըդառնայ, չըկայ), ը-ով առանձին (կը շինվին), առանց ը-ի, միացած (կպահվի), ապաթարցով (չ՝կար,

¹⁴ Ս. Գյուլբուրգյան, Նշվ. աշխ., էջ 41:

¹⁵ Նույն տեղում, էջ 48—51:

¹⁶ Նույն տեղում, էջ 214:

կ'կարդայ): Ձայնավորին նախորդող դիրքում՝ կպած, առանց որևէ բանի կամ ապաթարցող: «Արարատը» (1850 թ.) սրանք գրում է միշտ ապաթարցող (կ'հրամավի, չ'տալ, կ'ասի), հաշ. Արովյանը գրում է կպած, առանց բ-ի (չբերեց, չփոխեց, վիժանայ, կտայ), «Հյուսիսափայլը» (1860 թ.) ը-ով և առանձին (կը լինի, չը կամի), «Բազմավեպը» (1843 թ.), ը-ով և միացած (կըսկսինք), իսկ շ-ն կպած (չհանին): Այս խառը վիճակը շարունակվեց նաև հետագայում: «Բյուզանդիոնի» խմբագրությունը գրում է, թե իր համար միևնույն է՝ կը սիրեմ, կ'սիրեմ: Ամերիկայի «Հայք» լրագիրը գրում է ապաթարցող (կ'տեսնէ, կ'խորհի)՝ պատճառաբանելով, թե տեղ է շահում: «Հանդես ամսօրյան» քննադատում է «Հայքին» և մերժում նրա սկզբունքը: Նա բաղաձայնից առաջ գրում է ը-ով և առանձին (կը գտնեմ), իսկ ձայնավորից առաջ ապաթարցող (կ'առնում, կ'ուզէ), սխալ է համարում չգործեմ, չգործեք ձևերը, ճիշտ են չեմ գործեք, չի գործեք:

Այս հարցում բավական պարզություն մտցրեց Ա. Այտընյանը իր «Քըն-նական քերականության» մեջ¹⁷: Նա պարզաբանում է, թե ապաթարցը գրվում է գեղջված ձայնավորի փոխարեն (պիտի որ > պիտ'որ, անգամ մի ալ < անգամ մ' ալ, կը եղծանէր > կեղծանէր, ուստի սխալ են չ'ես, չ'է, չ'ըլլայ, չ'տեսնեմ, կ'ու գայ ձևերը, ճիշտ են չես, չէ, չըլլայ, չտեսնեմ, կու գայ ձևերը, ինչպես և կը գրէ, կը գտնէ: Այտընյանի սկզբունքով է առաջնորդվում «Հանդես ամսօրյան» և քննադատում է (1897 թ.) Պոլսի դպրոցներին, որ սկսել են գրել կտեսնէ, կխորհի փոխանակ՝ կը տեսնէ, կը խորհի:

Մենեվիշյանը «Գրական և լեզուական դիտողություններ» ծավալուն հոդվածում (1930, № 7, էջ 455, № 8, էջ 726) գրական մի շարք դիտողությունների հետ կուտարում է նաև լեզվական՝ ձևաբանական, շարահյուսական, ուղղագրական մեկնաբանություններ ու ուղղումներ: Օրինակ՝ ոչ թե պէտք էր ընդունէր, այլ պէտք էր ընդունել, պէտք է հարցնել, ոչ թե չպիտի գործեմ. այլ՝ պիտի չգործեմ, չ-ն բայի վրա դնել, ինչպես գերմաներենում (Ich werde nicht arbeiten): Մենեվիշյանի կարծիքով չի ուզէր դարձել է չ'ուզէր, ուստի ի-ի փոխարեն պիտի ապաթարց դնել (չ'արժէր): Զուգահեռ գրություններ են հետագայ և յետագայ, ամեն և ամէն, բայց տարբեր իմաստներով: Հիշեցնում է, որ արևմտահայերենում լերկ (խուլ) հնչյունները փոխվել են միջակ (ձայնեղ) հնչյունների. ա-ն դարձել դ, կ-ն՝ գ, պ-ն՝ ք և այլն: Ե-ից հետո միայն խուլ (լերկ) հնչյունի տառն է լինում (աշտարակ, հաշտ, դաշտ, հեշտ, գաւեշտ, պարկեշտ, հրաժեշտ, արինուշտ, Ռշտունի): Ի-ից հետո միջակ (ձայնեղ) չի լինում, լինում է խուլ կամ շնչեղ խուլ (թավ), օրինակ՝ Դաւիթ, առիթ, խրճիթ, կնճիթ, քիթ, գիտեմ, դիտող, խիտ, մարգարիտ, հաւիտեան: Հէգ և ճէգ ձևերից պիտի պահել ճէգ ձևը (ն. տ. № 7, էջ 455): Է-ից հետո ք-ն հազվադեպ է լինում (մատնէք, երգէք, չէք), է՛՛ ձևը միավանկերում չի լինում, իսկ բազմավանկերում էլ ե՛՛ ձևն է (թեքել, ծեքել, երբեք, երբեք և այլն): Չէզոք և չեզոք ձևերից նախընտրում է չեզոք ձևը: Տարածված է, թե չէզոք բառը բաղկացած է շ-է-գ-ով բաղադրիչներից, ուստի գրվում է է-ով, սակայն նիկոբայոս Ադոնցը ապացուցել է, որ այդ բառը բաղկացած է շ-եզ-ով բաղադրիչներից, ուստի պիտի գրվի ե-ով: Մենեվիշյանն այս կարծիքին է համաձայն և եզրառում, որ նշանակում է միև, բերում է նախադասություն (սեզ առ մու Մի ուս. եզոջէ), ն. տ. № 8, էջ 726): Հեղինակը ամենի, փնտռել, ամուլս բառերի հիշատակն է համարում ամենի (զարհուրելի բառի նման), փնտռել և ամուլս ձևերը: «Հանդեսի» ծանոթագրություններում և լրատուական բաժիններում երբեմն բացատրվում է այս կամ այն բառի ուղղագրությունը: Ուղղագրությունը զանազան հարցերի պարզաբանման շատ է օգնում ն. Աղբալյանի «Հնչյունական դիտողություններ» հոդվածաշարը (ն. տ., № 3, 5):

«Հանդեսը» զարմանալիորեն չի անդրադարձել 1922 թ. ուղղագրական փոփոխությանը, որ գատարվեց խորհրդային Հայաստանում: Միայն 1930 թ.

¹⁷ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար՝ կամ արդի հայերեն լեզու, Վիեննա, 1866, էջ 354.

մարտ-հունիս համարի 365 էջի տողատակ ծանոթագրությունում կարդում ենք, թե Հայաստանում անտեղի մուծեցին Վ-ի փոխարեն շ, ա-ի փոխարեն՝ վա, ե-ի փոխարեն՝ յե, յ-ի փոխարեն՝ հ, ի-ի փոխարեն՝ յա, որով յոթ տառով ծանորաբեռնվեց գրությունը, թույլ տրվեց թուղթ ու թանաքի կորուստ: Եթե այս տողերն էլ չլինեին, տպագրված հոդվածներից ու «Հանդեսի» ուղղագրական սկզբունքից պարզ է, որ ամսագիրը չբանավիճելով, լուսթյամբ մերժում է 1922 թ. ուղղագրական փոփոխությունները:

Ամփոփենք. «Հանդես ամսորյա» ամսաթերթը անխախտ կանգնած է եղել ու կանգնած է հայերենի ավանդական ուղղագրության պաշտպանության ու պահպանության դիրքերում: Տաղանդավոր հայագետների՝ Այտրնյան, Մենեվիշյան, Աճառյան, Տաշյան և ուրիշների, հոդվածներով «Հանդեսը» մերժել է ամեն տեսակի առաջարկություն ու կարծիք, որոնք դուրս-ինչ շեղվել են ավանդական ուղղագրությունից: «Հանդեսի» շնորհիվ այսօր ողջ սփյուռքում գործում է կայուն ու միասնական ավանդական ուղղագրությունը: Ավելի լավ է միասնական, ողջ ազգի համար պարտադիր, թեկուզ և դժվար կամ պակասավոր ուղղագրությունը, քան ոչ միասնական, թեկուզ և կատարյալ ու հեշտ ուղղագրությունը: «Սիրտս հայ պիտի զգա, միտքս հայ պիտի խորհի, լեզուս հայերէն պիտի խօսի» — այս առողջ սկզբունքն է եղել «Հանդեսի» առաջնորդը, որի շնորհիվ, կրկնում ենք, սփյուռքում պահպանվել ու պաշտպանվել է հայերենի ավանդական ուղղագրությունը: Հնությունը լեզվի հարստությունն է, չի կարելի հրաժարվել նրանից կամ խեղանդամել այն:

ВОПРОСЫ ОРФОГРАФИИ АРМЯНСКОГО ЯЗЫКА НА СТРАНИЦАХ «АНДЕС АМСОРЕА»

С. В. ГЮЛЬБУДАГЯН

Р е з ю м е

Проблема орфографии и транскрипции армянского языка была и остается дискуссионной в арменоведении, так как не было и не существует системы правописания и транскрипции в восточном и западном ашхарабаре.

По этой проблеме на страницах журнала «Андес амсореа» выступали видные арменоведы Г. Меневишян, А. Айтынян, Г. Ачарян, А. Ташян, Гюбшман и другие, которые стремились создать унифицированную систему орфографии и транскрипции для восточного и западного ашхарабара, сохраняя при этом классическую орфографию.

QUESTIONS OF THE ARMENIAN LANGUAGE ORTHOGRAPHY IN THE PAGES OF „HANDESS AMSORYA“

GYULBUDAGHIAN S. V.

S u m m a r y

Some problems of the orthography and transcription of the Armenian language had been and still remain debatable in armenology as no system of spelling and transcription existed nor does it exist in both East and West Armenian Ashkharabars.

The pages of the magazine „Handess Amsorya“ contain statements regarding that problem by outstanding armenologists Menevishlan G., Aitinian A., Ajarlan H., Tashlan G., Huebschman and others, who strived to create a unified system of orthography and transcription for both East and West Armenian Ashkharabars, retaining at the same time the classic orthography.